

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2014թ. հոկտեմբերի 3-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 25-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Է. Շաթիրյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ.

1. *Գիտական հաղորդում (զեկ.՝ Քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Գաբուզյան):*
2. *ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2014-2015 ուս. տարվա աշխատանքային ծրագրի հաստատում (զեկ.՝ խորհրդի քարտուղար Է. Շաթիրյան):*
3. *Հաղորդում ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին (զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Ղազինյան):*
4. *Ընթացիկ հարցեր:*

1. **ԼՍԵՑԻՆ.** Գիտական հաղորդում. «Պատիժ նշանակելու հիմնախնդիրները՝ ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգի» (զեկ.՝ Քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Գաբուզյան):

Զեկուցողն անդրադարձավ պատիժ նշանակելու հիմնախնդիրներին՝ ներկայացնելով դրանց լուծման հնարավոր իրավական կառուցակարգերը, որոնք իրենց ամրագրումն են ստացել ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղազինյանը, Գ. Դանիելյանը, Ն. Այվազյանը, Վ. Հովհաննիսյանը, Ա. Վաղարշյանը, Ռ. Մելիքյանը, Ա. Հայկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունելի գիտություն:
Հաղորդումը կցվում է արձանագրությանը:

2. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2014-2015 ուս. տարվա աշխատանքային ծրագրի հաստատման հարցը (զեկ.՝ խորհրդի քարտուղար Է. Շաթիրյան):

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի քարտուղար Է. Շաթիրյանը ներկայացրեց ֆակուլտետի գիտական խորհրդի 2014-2015 ուս. տարվա աշխատանքային ծրագիրը, որով նախատեսված է ֆակուլտետի գիտական խորհրդի թվով ինը նիստերի անցկացում: Նիստեր կարող են հրավիրվել նաև ըստ անհրաժեշտության:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ս. Մեղրյանը, Հ. Խաչիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2014-2015 ուս. տարվա աշխատանքային ծրագիրը:

Աշխատանքային ծրագիրը կցվում է արձանագրությանը:

3. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին (զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Ղազինյան):

Խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը ներկայացրեց ֆակուլտետի առկա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2014-2015 ուս. տարվա ընդունելության ամփոփ արդյունքները:

Գ. Ղազինյանն անդրադարձավ նաև ֆակուլտետի մագիստրատուրայում ուսումնական գործընթացի կազմակերպման արդի վիճակին՝ մատնանշելով մի շարք հիմնախնդիրներ: Այս կապակցությամբ, նպատակահարմար համարվեց առաջիկայում ձևավորել աշխատանքային խումբ, որը գալիք ուսումնական տարվա համար պետք է մշակի և ներկայացնի համապատասխան առաջարկություններ՝ ուղղված մագիստրատուրայում ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը: Նպատակահարմար համարվեց սույն հարցը քննարկման առարկա դարձնել ֆակուլտետի գիտական խորհրդի առաջիկա նիստերից մեկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Հայկյանը, Վ. Ավետիսյանը, Կ. Գևորգյանը, Ա. Վաղարշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունելի գիտություն:

Հաղորդումը կցվում է արձանագրությանը:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

4.1. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Տիգրան Նադդայանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Դանիելյանը, Է. Շաթիրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Տիգրան Նաղդայանի՝ «Գործադիր իշխանության նկատմամբ ՀՀ Ազգային ժողովի վերահսկողության սահմանադրական հիմքերը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ն. Այվազյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.2. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Էդգար Անդրեասյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Ավետիսյանը, Ս. Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Էդգար Անդրեասյանի՝ «Առոչինչ գործարքի ինստիտուտը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (գիտագործնական վերլուծություն)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ա. Հայկյանցին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.3. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Արսեն Հովհաննիսյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Ավետիսյանը, Ս. Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Արսեն Հովհաննիսյանի՝ «Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք (քաղաքա-

ցիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., դոց. Վ. Ավետիսյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.4. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Աննա Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Ավետիսյանը, Վ. Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Աննա Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Ֆակտորինգի պայմանագրի քաղաքացիաիրավական կարգավորումը ՀՀ օրենսդրությունում» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք):

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.5. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Գագիկ Հարությունյանի և Սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ Անահիտ Մանասյանի համահեղինակությամբ պատրաստված «Սահմանադրական վերահսկողությունը և հսկողությունը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղազինյանը, Ա. Մարգարյանը, Է. Շաթիրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Սահմանադրական իրավունքի ամբիոնի 2014 թվականի սեպտեմբերի 26-ի նիստի թիվ 1 արձանագրությամբ հաստատված միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Սահմանադրական վերահսկողությունը և հսկողությունը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը շարադրված է պատշաճ գիտական մակարդակով, երաշխավորել այն հրատարակության:

4.6. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ Տաթևիկ Դավթյանի «ՀՀ

ընտանեկան իրավունք. գործնական պարապմունքների ձեռնարկ» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Հայկյանցը, Տ. Բարսեղյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Քաղաքացիական իրավունքի ամբիոնի 2014 թվականի հոկտեմբերի 1-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ հաստատված միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ «ՀՀ ընտանեկան իրավունք. գործնական պարապմունքների ձեռնարկ» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը շարադրված է պատշաճ գիտական մակարդակով, երաշխավորել այն հրատարակության:

4.7. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի «Տարեգիրք» գիտական պարբերականի հրատարակության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղազինյանը, Կ. Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի «Տարեգիրք» գիտական պարբերականը երաշխավորել հրատարակության:

4.8. ԼՍԵՑԻՆ. Սույն թվականի ապրիլի 28-30-ին տեղի ունեցած ԵՊՀ 95-ամյակին նվիրված միջբուհական գիտաժողովին մասնակցած՝ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող Վարդան Խաչատրյանի կողմից ներկայացված՝ «Էլեկտրոնային առևտրի զարգացման խոչընդոտները Հայաստանի Հանրապետությունում և դրանց իրավական լուծումները» վերտառությամբ հողվածի տպագրության երաշխավորման հարցը (զեկ. ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահ Մ. Հովսեփյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղազինյանը, Ա. Հայկյանցը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Տպագրության երաշխավորել իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող Վարդան Խաչատրյանի կողմից ներկայացված՝ «Էլեկտրոնային առևտրի զարգացման խոչընդոտները Հայաստանի Հանրապետությունում և դրանց իրավական լուծումները» վերտառությամբ աշխատանքը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Է. Շաթիրյան